ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/64 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 18.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված թիվ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով՝ «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգման (վերակազմավորում) Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ):

Համաձայն 07.05.2018թ. թվականի Ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի N 3 արձանագրության 6.1 կետի՝ հանձնաժողովը որոշել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով ընթացակարգի հաղթող ճանաչել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին:

Ընկերությունը գտնում է, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մրցութային փաստաթղթերում առկա են էական անհամապատասխանություն, որոնք բավարար հիմք են հանդիսանում «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին Ընթացակարգի հաղթող ճանաչելու մասին որոշումը վերացնելու համար:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը հրավերի պահանջներին ոչ համապատասխան ներկայացնելու դեպքում մասնակիցը չի կարող ճանաչվել մրցույթի հաղթող:

Մրցույթի հրավերի 7.4-րդ կետը սահմանում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՃՇՇ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է 20.04.2018 թվականին «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված N2866-02 բանկային երաշխիքը:

Համաձայն նշված երաշխիքի պայմանների, դրա վավերականության ժամկետի տևողությունը կախված է այն պայմանից, թե ճանաչվել է պրինցիպալը («ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՃՇՇ» ՓԲԸ-ն) մրցույթի հաղթող կամ ոչ:

Այսպես, համաձայն N2866-02 բանկային երաշխիքի, եթե Մրցույթի մասնակիցը ճանաչվում է հաղթող, ապա բանկային երաշխիքի գործողությունը դադարում է այն պահին, երբ Բանկը ստանում է Մրցույթի մասնակցի կողմից ստորագրված պայմանագրային համաձայնագիրը և Շահառուն ստանում է Ընթացակարգի մասնակցի հրահանգով Շահառուի համար թողարկված կատարողական երաշխիք:

Այն դեպքում, երբ Մրցույթի մասնակիցը հաղթող չի ճանաչվում, ապա երաշխիքը դադարում է հետևյալ դեպքերից որևէ մեկի ավելի վաղ վրա հասնելու պահից.

ա) երբ Բանկը ստանում է մրցույթի հաղթողին ճանաչելու վերաբերյալ Շահառուի ծանուցման պատճենը Մրցույթի մասնակցին:

բ) հայտը ներկայացնելուց հետո 90 աշխատանքային օր անց:

Համադրելով «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՃՇՇ» ՓԲԸ-ը կողմից ներկայացված N2866-02 բանկային երաշխիքի պայմանները Մրցույթի հրավերի 7.4-րդ կետով սահմանված պահանջների հետ, ակնհայտ է դառնում, որ այն չի համապատասխանում նշված պահանջներին, քանի որ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը սահմանող այլ պայմանների վրա հասնելուն պես նրա վավերականության ժամկետն ավելի պակաս է լինելու Մրցույթի հրավերի 7.4-րդ կետով սահմանված 90 աշխատանքային օրվա ժամկետից:

Ամեն դեպքում, հայտի ապահովում հանդիսացող բանկային երաշխիքը կարող է համարվել Մրցույթի հրավերի 7.4-րդ կետի պահանջները բավարարող միայն այն դեպքում, երբ այն հստակ սահմանում է 90 կամ ավել աշխատանքային օր տևողությամբ վավերականության ժամկետ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասը, 46-րդ, 49-րդ և 50-րդ հոդվածները, ինչպես նաև Մրցույթի հրավերի 7.4 կետը՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է՝

1. Վերացնել «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրությամբ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին մրցույթի հաղթող ճանաչելու մասին որոշումը:

2. «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 07.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված թիվ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով՝ «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգման (վերակազմավորում) Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» ընթացակարգի հրավերի Հավելված 11-ով սահմանվել է բանկային երաշխիքի օրինակելի ձևը (ինչպես հայտի ապահովան, այնպես էլ պայմանագրի ապահովման), որում սահմանված են, թե մասնակիցների կողմից ներկայացվելիք բանկային երաշխիքները ինչպիսի կառուցվածք պետք է ունենա և ինչ պայմանների բավարարեն:

«Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ. տրամադրված թիվ 2866-02 բանկային երաշխիքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում Մրցույթի հրավերի Հավելված 11-ով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևին ինչպես բովանդակային առումով, այնպես էլ կառուցվածքի տեսանկյունից (օրինակ «բանկային երաշխիքը հետկանչելի չի» պահանջը առկա է օրինակելի ձևում և բացակայում է ներկայացված բանկային երաշխիքում), այսինքն «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի կետի խախտում, քանզի հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, իսկ Հավելված 11-ով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևի և «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 20.04.2018թ. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված թիվ 2866-02 բանկային երաշխիքի ուսումնասիրությունից ուղղակիորեն հետևում է, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի ներկայացրած բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բացակայում է, թե սույն

երաշխիքով ով է հանդիսանում բենեֆիցիար և ով է հանդիսանում պրինցիպալ: Երաշխիքում նշված է միայն Շահառու՝ «Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ» և Ընթացակարգի մասնակից՝ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ, այնինչ Մրցույթի հրավերի Հավելված 11-ով հստակ պահանջվում է, որպեսզի բանկային երաշխիքում նշվեն թե՛ պրինցիպալը, և թե՛ բենեֆիցիարը, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

«Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքով որպես հայտի ապահովումով նախատեսված գումարը վճարելու հիմք նախատեսված է հետևյալը՝

Մրցույթի մասնակիցը խախտել է իր պարտավորությունները համաձայն Ընթացակարգի պայմանների, քանի որ նա՝

ա. հետ է վերցրել իր Մրցութային առաջարկը Մրցույթին մասնակցի կողմից Մրցույթին մասնակցելու նամակում նշված առաջարկի վավերության ժամկետի, կամ Մրցույթի մասնակցի կողմից երկարաձգված վավերության ժամկետի ընթացքում,կամ

բ. մրցութային առաջարկի վավերության ժամկետի ընթացքում, ստանալով ծանուցում Շահառուի կողմից իր Մրցութային առաջարկի ընդունման մասին՝ (1) հրաժարվում է կնքել պայմանագրային համաձայնագիրը, կամ (2) հրաժարվում է ներկայացնել կատարողական երաշխիք՝ համաձայն Շահառուի մրցութային փաստաթղթերի «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին» (ՀՄՄ) բաժնի:

Այսինքն՝ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքը ոչ միայն ամբողջությամբ տարբերվում է Մրցույթի հրավերի օրինակելի ձևով նախատեսված ձևից, այլ նաև հայտի ապահովման գումարը գանձելու հիմքերն են էականորեն նեղացվել:

Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով, «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքը վկայակոչված «ա» և «բ» կետերի մի կողմից և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համադրումից ակնհայտ է դառնում, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են հայտի ապահովման վճարման մի շարք հիմքեր, որոնց բացակայում են «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքում (օրինակ, մասնակիցը խախտել է գնման գործընթացում ստանձնած պարտավորությունը կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և այլ):

Նման պայմաններում Ընկերության համար ակնհայտ է, որ այս մասով «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Մինչդեռ, ինչպես հայտնի է, հայտի ապահովման նպատակով բանկային երաշխիքը ներկայացվում է ի կատարումն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների:

Համաձայն Մրցույթի հրավերի 7.4 կետի՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Այնինչ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքով հայտի ապահովման վավերականությունը սահմանվել է հետևյալ կերպ՝ սույն երաշխիքի վավերականության ժամկետը լրանում է՝

ա. եթե Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող է, ապա՝ այն պահին, երբ մենք ստանում ենք Մրցույթի մասնակցի կողմից ստորագրված պայմանագրային համաձայնագիրը և Դուք ստանում եք Մրցույթի մասնակցի հրահանգով Շահառուի համար թողարկված կատարողական երաշխիքը,

բ. Եթե Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող չէ, ապա՝ հետևյալ դեպքերից ավելի վաղի տեղի ունենալու պահին.

1. մենք ստանում ենք մրցույթի հաղթողին ճանաչելու վերաբերյալ Շահառուի ծանուցման պատճենը Մրցույթի մասնակցի,

2. հայտը ներկայացնելուց հետո իննսուն (90) աշխատանքային օր անց:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքի վավերականության ժամկետը հակասում է հրավերի 7.4 կետով պահանջված վավերականության ժամկետին, քանզի առկա է հրավերով սահմանված ժամկետից շուտ բանկային երաշխիքը վավերականության ավարտի հնարավորություն:

Ինչ վերաբերում է «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի 05.06.2018թ. թիվ 4029-02 գրությամբ արտահայտած այն դիրքորոշմանը առ այն, որ 90 (իննսուն) աշխատանքային օր վավերականության ժամկետը վերաբերում է նաև բանկային երաշխիքի վկայակոչած «բ» կետի 1-ին ենթակետին, ապա նախ, նշված պնդումը հակասում է վիճարկվող բանկային երաշխիքի նշված կետերի բովանդակությանը: Եվ երկրորդ, վավերականությանը վերաբերող «ա» ենթակետում էլ նշվում է, որ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը ավարտվում է, եթե «Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող է, ապա՝ այն պահին, երբ մենք ստանում ենք Մրցույթի մասնակցի կողմից ստորագրված պայմանագրային համաձայնագիրը և Դուք ստանում եք Մրցույթի մասնակցի հրահանգով Շահառուի համար թողարկված կատարողական երաշխիքը»:

Ուստի եթե 90 (իննսուն) աշխատանքային օր վավերականության ժամկետը չի տարածվում վկայակոչված «ա» ենթակետին, ապա կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ պայմանագիրը դեռևս երկկողմանի ստորագրված չեղած պայմաններում ավարտվի դրա վավերականության ժամկետը, քանի որ ըստ վիճարկվող բանկային երաշխիքի՝ դրա վերականությունը ավարտվում է, եթե մասնակիցը ներկայացնում է իր կողմից ստորագրած պայմանագիրը (իսկ եթե պատվիրատուն չի ստորագրում պայմանագիրը, կամ այդ փուլում մասնակցին զրկում պայմանգիր կնքելու իրավունքից և այլ):

Այսպիսով, թվարկված «ա» և «բ» կետերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ նշված բանկային երաշխիքով սահմանված են հրավերով պարտադիր, իմպերատիվ պահանջ հանդիսացող 90 (իննսուն) աշխատանքային օր վավերականության ժամկետից տարբերվող (ավելի շուտ ավարտվող) վավերականության այլ ժամկետներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ուսումնասիրելով վերոշարադրված փաստերն ու փաստական հանգամանքները՝ Ընկերությունը գտնում է, որ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը (բանկային երաշխիքի մասով) հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, ուստի նշված հայտը ենթակա է մերժման:

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն խնդրել է՝

1. Պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելու, առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու և մրցույթի հաղթող ճանաչելու մասին որոշումները:
2. Պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը մերժել՝ հրավերի պահանջներին անբավարար գնահատելու հիմքով:
3. Պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տվյալ մրցույթով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին:

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.05.2018թ. ժամը 10:30-ին և 11.06.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով և ի լրումն բողոքի գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.05.2018թ. թիվ 380 գրությամբ հայտնել է, որ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգման (վերակազմավորում) Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթին:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի որոշման՝ Ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն:

Բողոքաբերը գտնում է, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մրցութային փաստաթղթերում առկա է էական անհամապատասխանություն, մասնավորապես «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքի վավերականության ժամկետը պակաս է, քան Ընթացակարգի հրավերի 7.4 կետով սահմանված 90 աշխատանքային օրվա ժամկետը:

Համաձայն «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված երաշխիքի, որը տրված է 20.04.2018թ. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից, դրա վավերականության ժամկետի տևողությունը կախված է այն պայմանից, թե ճանաչվել է հաղթող «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն, թե ոչ:

Այսպես, համաձայն երաշխիքի, եթե Ընթացակարգի մասնակիցը ճանաչվում է հաղթող, ապա բանկային երաշխիքի գործողությունը դադարում է այն պահին, երբ բանկը ստանում է ընթացակարգի մասնակցի հրահանգով Շահառուի համար թողարկված կատարողական երաշխիք:

Այդ դեպքում, երբ մրցույթի մասնակիցը հաղթող չի ճանաչվում, ապա երաշխիքը դադարում է հետևյալ դեպքերից որևէ մեկի ավել վաղ հասնելու դեպքում.

ա) Երբ Բանկը ստանում է Մրցույթի հաղթողին ճանաչելու վերաբերյալ Շահառուի ծանուցման պատճենը Մրցույթի մասնակցին.

բ) հայտը ներկայացնելուց հետո 90 աշխատանքային օր անց:

Գնահատելով «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի պայմանները և համադրելով այն Մրցույթի հրավերի 7.4 կետով սահմանված պահանջների հետ գնահատող հանձնաժողովը բավարար է համարում Մրցույթի հրավերի 7.4 կետով սահմանված պահանջը:

Ապահովագրելով Պատվիրատուի բոլոր ռիսկերը, առ այն, որ հայտի ապահովումը տվյալ բովանդակությամբ ներկայացնելը չի կարող հետագայում, անհրաժեշտության դեպքում, խոչընդոտել մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, ինչպես նաև այն փաստը, որ առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկների միջև առկա է մոտ 200 000 000 ՀՀ դրամի տարբերություն, Պատվիրատուն 25.04.2018թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին:

Պատվիրատուն նշել է նաև, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ի լրումն ներկայացվել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի միջև կնքված բանկային երաշխիքի թիվ E18-000196 համաձայնագիրը: Համաձայն ներկայացված համաձայնագրի 1.3-րդ կետի՝ բանկային երաշխիքը գործում է մինչև 04.09.2018թ.

Հետևաբար «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ 2866-02 բանկային երաշխիքի վավերականության ժամկետը հրավերի 7.4-րդ կետով սահմանված 90 աշխատանքային օրվանից ավելի է և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան:

Պատվիրատուն գտնում է, որ նման իրավիճակում ձևական սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն, ուստի Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն 11.06.2018թ. թիվ 411 գրությամբ հայտնել է նաև, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգման (վերակազմավորում) Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի հրավերի հավելված 11-ով սահմանված բանկային երաշխիքում

նշվում է, որ պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի ՀՀ ֆինանսների նախարարությունը

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 15-րդ կետի եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Հետևաբար, միայն կանխավճարի երաշխիքում է որպես բենեֆիցիար նշվում ՀՀ ֆինանսների նախարարությունը, ինչը և հիմք է հանդիսանում հրավերով սահմանված Հավելված 11-ը չհամարել պարտադիր սահմանված ձև հայտի ապահովման համար:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018թ. N 423-Ն որոշումը, որով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշումը, ևս պարզ է դառնում, որ հավելված 11-ը չի կարող սահմանվել իբրև պարտադիր հայտի ապահովման ձև, քանի որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին բանկային երաշխիքը տրված է եղել 20.04.2018թ.:

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին հայտի ապահովումը տրված է եղել 11.04.2018թ., այսինքն մինչև վերոհիշյալ որոշումն ուժը կորցրած լինելու պահը և նույնպես չի համապատասխանել հավելված 11-ով սահմանված երաշխիքի ձևին:

Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 04.06.2018թ. թիվ 3988-02 տեղեկատվության, բանկային երաշխիքում առկա «բ» կետի «2) հայտը ներկայացնելու հետո 90 աշխատանքային օր անց» ենթակետը կիրառելի է նաև «բ» կետի (1) ենթակետի համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև գնահատելով Պատվիրատուի բոլոր ռիսկերը Պատվիրատուն գտնում է, որ նման իրավիճակում հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.05.2018թ. ժամը 10:30-ին և 11.06.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար Ջերմուկ համայնքի փողոցների շինարարական բարեկարգման «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգում (վերակազմավորում) Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

2. Ընթացակարգի հրավերի 11-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի օրինակելի ձև:

3. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ. տրված թիվ 2866-02 բանկային երաշխիքը (այսուհետև՝ երաշխիք) հետևյալ բովանդակությամբ.

«...Մրցույթի մասնակցի խնդրանքով մենք՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն, հանդիսանալով երաշխավոր, հաստատում ենք, որ պարտավորվում ենք անվերապահորեն, Շահառուի առաջին իսկ գրավոր պահանջով, նրան վճարել 37 500 000 (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ չգերազանցող գումար, եթե այդ պահանջի հետ մեկտեղ մեզ ներկայացվի նաև գրավոր ծանուցում որով կսահմանվի, որ Մրցույթի մասնակիցը խախտել է իր պարտավորությունները համաձայն մրցույթի պայմանների, քանի որ նա՝

ա) հետ է վերցրել իր Մրցութային առաջարկը Մրցույթի մասնակցի կողմից Մրցույթին մասնակցելու նամակում նշված առաջարկի վավերականության ժամկետի, կամ Մրցույթի մասնակցի կողմից երկարաձգված վավերականության ժամկետի ընթացքում, կամ

բ) Մրցութային առաջարկի վավերականության ժամկետի ընթացքում, ստանալով ծանուցում Շահառուի կողմից իր Մրցութային առաջարկի ընդունման մասին (i) հրաժարվում է կնքել պայմանագրային համաձայնագիրը, կամ (ii) հրաժարվում է ներկայացնել կատարողական երաշխիք համաձայն Շահառուի մրցութային փաստաթղթերի «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին» ՀՄՄ բաժնի:

Սույն երաշխիքի վավերականության ժամկետը լրանում է՝

ա) եթե Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող է, ապա այն պահին, երբ մենք ստանում են Մրցույթի մասնակցի կողմից ստորագրված պայմանագրային համաձայնագիրը և Դուք ստանում եք Մրցույթի մասնակցի հրահանգով Շահառուի համար թողարկված կատարողական երաշխիքը.

բ) եթե Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող չէ, ապա՝ հետևյալ դեպքերից ավելի վաղի տեղի ունենալու պահին.

1) Բանկը ստանում է մրցույթի հաղթողին ճանաչելու վերաբերյալ Շահառուի ծանուցման պատճենը Մրցույթի մասնակցին.

2) հայտը ներկայացնելուց հետո իննսուն (90) աշխատանքային օր անց:

Համապատասխանաբար, սույն երաշխիքով ցանկացած վճարման պահանջ Բանկի գրասենյակ պետք է ներկայացվի վերոնշյալ ամսաթվից ոչ ուշ:

Սույն երաշխիքը կարգավորվում է ցպահանջ երաշխիքների «Uniform rules for Demand Guarantees (URDG) 2010 Revision, ICC Publication No. 758» միասնական կանոններով:»

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետով կայացված որոշմամբ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 07.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 18.05.2018թ. բողոքը, ի լրումն բողոքի 07.06.2018թ. գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 21.05.2018թ. թիվ 380 և 11.06.2018թ. թիվ 411 գրությունները և կից փաստաթղթերը, «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար Ջերմուկ համայնքի փողոցների շինարարական բարեկարգման «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգում (վերակազմավորում) Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.03.2018թ. կազմակերպվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթ:

Մրցույթի հրավերի 11-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի հետևյալ օրինակելի ձևը.

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) _____
հանդիսանում է (անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար[1]) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում

---

[1] *Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:*

*** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:**

ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (_____) _____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) _____
2) _____
3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)
աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

_____
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Միևնույն ժամանակ Մրցույթի հրավերի նույն կետի 7.3 և 7.4 ենթակետերով սահմանվել է, որ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Ընդ որում հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2018թ. տրված թիվ 2866-02 բանկային երաշխիքը՝ հետևյալ բովանդակությամբ.

«...Մրցույթի մասնակցի խնդրանքով մենք՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն, հանդիսանալով երաշխավոր, հաստատում ենք, որ պարտավորվում ենք անվերապահորեն, Շահառուի առաջին իսկ գրավոր պահանջով, նրան վճարել 37 500 000 (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ չգերազանցող գումար, եթե այդ պահանջի հետ մեկտեղ մեզ ներկայացվի նաև գրավոր ծանուցում որով կսահմանվի, որ Մրցույթի մասնակիցը խախտել է իր պարտավորությունները համաձայն մրցույթի պայմանների, քանի որ նա՝

ա) հետ է վերցրել իր Մրցութային առաջարկը Մրցույթի մասնակցի կողմից Մրցույթին մասնակցելու նամակում նշված առաջարկի վավերականության ժամկետի, կամ Մրցույթի մասնակցի կողմից երկարաձգված վավերականության ժամկետի ընթացքում, կամ

բ) Մրցութային առաջարկի վավերականության ժամկետի ընթացքում, ստանալով ծանուցում Շահառուի կողմից իր Մրցութային առաջարկի ընդունման մասին (i) հրաժարվում է կնքել պայմանագրային համաձայնագիրը, կամ (ii) հրաժարվում է ներկայացնել կատարողական երաշխիք համաձայն Շահառուի մրցութային փաստաթղթերի «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին» ՀՄՄ բաժնի:

Սույն երաշխիքի վավերականության ժամկետը լրանում է՝

ա) եթե Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող է, ապա այն պահին, երբ մենք ստանում են Մրցույթի մասնակցի կողմից ստորագրված պայմանագրային համաձայնագիրը և Դուք ստանում եք Մրցույթի մասնակցի հրահանգով Շահառուի համար թողարկված կատարողական երաշխիքը.

բ) եթե Մրցույթի մասնակիցը մրցույթի շահող չէ, ապա՝ հետևյալ դեպքերից ավելի վաղի տեղի ունենալու պահին.

1) Բանկը ստանում է մրցույթի հաղթողին ճանաչելու վերաբերյալ Շահառուի ծանուցման պատճենը Մրցույթի մասնակցին.

2) հայտը ներկայացնելուց հետո իննսուն (90) աշխատանքային օր անց:

Համապատասխանաբար, սույն երաշխիքով ցանկացած վճարման պահանջ Բանկի գրասենյակ պետք է ներկայացվի վերոնշյալ ամսաթվից ոչ ուշ:

Սույն երաշխիքը կարգավորվում է ցպահանջ երաշխիքների «Uniform rules for Demand Guarantees (URDG) 2010 Revision, ICC Publication No. 758» միասնական կանոններով:»

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ուղղված 04.06.2018թ. 3988-02 գրությամբ հայտնել է, որ բանկային երաշխիքում առկա «բ» կետի «հայտը ներկայացնելուց հետո իննսուն (90) աշխատանքային օր անց» ենթակետը կիրառելի է նաև «բ» կետի 1-ին ենթակետի համար:

Նույն բանկի կողմից 05.06.2018թ. տրված թիվ 4029-02 տեղեկանքով ամրագրվել է, որ 90 աշխատանքային օր վավեր լինելու պահանջը տարածվում է նաև «բ» կետի 1-ին ենթակետի վրա, որն ենթադրում է, որ նույնիսկ «բ» կետի 1-ին ենթակետով

նախատեսված պայմանը ի հայտ գալու դեպքում այնուամենայնիվ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը մնում է իննսուն (90) աշխատանքային օր:

Միևնույն ժամանակ Մրցույթի հրավերի 11-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի օրինակելի ձևը, որը համընկնում է ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևին:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշման (ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018թ. N 423-Ն որոշմամբ) 2-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարները ***«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիքը պետք է պահանջեն սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ ***բանկային երաշխիքի*** կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշման 2-րդ կետի համաձայն երաշխիքի օրինակելի ձևն ենթակա է կիրառման «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացնելիս, ինչը նշանակում է, որ որոշմամբ հաստատվել է երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը, որը կիրառելի թե հայտի ապահովում և թե պայմանագրի ապահովում ներկայացնելիս:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 20.04.2018թ. N 2866-02 բանկային երաշխիքը իր

բովանդակությամբ էականորեն տարբերվում է Ընթացակարգի հրավերի 11-րդ հավելվածով հաստատված երաշխիքի օրինակելի ձևից և չի պարունակում Մրցույթի հրավերի 11-րդ հավելվածի մի շարք կետերով (մասնավորապես 3-րդ, 7-11-րդ կետեր) նախատեսված բովանդակային պահանջները:

Դրա հետ մեկտեղ երաշխիքով նախատեսվել են հայտի ապահովումը վճարելու դեպքերը, դրանք են՝

Մրցույթի մասնակիցը խախտել է իր պարտավորությունները համաձայն մրցույթի պայմանների, քանի որ նա՝

ա) հետ է վերցրել իր Մրցույթային առաջարկը Մրցույթի մասնակցի կողմից Մրցույթի ն մասնակցելու նամակում նշված առաջարկի վավերականության ժամկետի, կամ Մրցույթի մասնակցի կողմից երկարաձգված վավերականության ժամկետի ընթացքում, կամ

բ) Մրցութային առաջարկի վավերականության ժամկետի ընթացքում, ստանալով ծանուցում Շահառուի կողմից իր Մրցութային առաջարկի ընդունման մասին (i) հրաժարվում է կնքել պայմանագրային համաձայնագիրը, կամ (ii) հրաժարվում է ներկայացնել կատարողական երաշխիք համաձայն Շահառուի մրցութային փաստաթղթերի «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին» ՀՄՄ բաժնի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.3 կետով սահմանվել է, որ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրելով «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 20.04.2018թ. N 2866-02 բանկային երաշխիքով նախատեսված հայտի ապահովումը վճարելու դեպքերը, գտնում եմ, որ դրանք ավելի նեղ են, քան այն հիմքերը, որոնք նախատեսված են Օրենքով և հրավերով: Մասնավորապես՝ երաշխիքի մեջ բացակայում է Ընթացակագրի հրավերի 7-րդ կետի 7.3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հայտի ապահովումը վճարելու հիմքը, այն է՝ երբ մասնակցի կողմից խախտվում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Գտնում եմ, որ սույն մասով Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը նույնպես չի համապատասխան Մրցույթի հրավերի պահանջներին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերի պահանջներին և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերագրյալը՝ գտնում եմ, որ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ պահանջին, ապա հայտնում եմ, ոչ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի պահանջն՝ Ընկերությանը Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, ենթակա է մերժման, քանի որ նշված լիազորությունը պատկանում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ սույն բողոքի շրջանակներում քննության առարկա է հանդիսացել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը, իսկ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտը չի քննարկվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 18.05.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

ա) դադարեցնել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելու, առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները.

բ) «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**